



*Translations from Armenian into Bulgarian, 1991 to date*

a study by the Next Page Foundation in the framework of the Book Platform project

conducted by Agop Ormandjiyan<sup>1</sup> and translated from English into Armenian by Gohar Meliksetyan

---

<sup>1</sup> Agop Ormandjiyan is armenologist and translator.

This text is licensed under Creative Commons



Բուլղարա-հայկական մշակութային ավանդական հարաբերություններն ընդգրկում են նաև Բուլղարիայում թարգմանված հայ գրականությունը: Այն սկսվել ու շարունակվում է 1878 թվականի ռուս-թուրքական պատերազմից առ այսօր: XIX դարի 80-ականներին Սանկտ Պետերբուրգի մի քանի հայ ուսանողներ բուլղարերենից հայերեն թարգմանեցին Լյուբեն Կարավելովի և Զաքարի Ստոյանովի հեղափոխական թեմայով որոշ գործեր, որպեսզի բարձրացնեն Օսմանյան լծի տակ հեծող հայ ժողովրդի մարտական ոգին:

Բուլղարիայում միաժամանակ թարգմանվեցին հայ գրողների՝ Ռաֆայել Պատկանյանի, Բաֆֆու, Իսաչատուր Աբովյանի ամբողջական կամ ընտիր ստեղծագործությունները հեղափոխական և այլ թեմաներով: Պեյո Յավորովի «Հայեր» բանաստեղծության լույս տեսնելուց հետո մտավորականները սկսեցին մեծ հետաքրքրություն ցուցաբերել այս հին, անհայտ և նոր գրականության հանդեպ: 1910 թվականին Իվան Ստ. Անդրեյչինը տպագրում է «Բոլոր ժանրերի ծաղկաքաղ» անթոլոգիան, որը համաշխարհային դասականների հետ մեկտեղ ընդգրկում էր նաև հայ բանաստեղծների՝ Սայաթ-Նովայի, Նահապետ Քուչակի, Հովհաննես Պլուզի ստեղծագործությունները: 1942 թվականին Կոնստանտին Դինոլովը տպագրում է «Հայկական պոեզիա» անթոլոգիան:

20-րդ դարի, հատկապես 30-60-ական թվականները նպաստավոր էին Բուլղարիայում հայ թարգմանչական գրականության զարգացման ու տարածման համար: ՄՍՀՄ ժողովուրդների գրականության՝ վերից պարտադրված փոխադարձ թարգմանության գործընթացը պարտավորեցնում էր հրատարակչություններին հրատարակչական պլաններում ընդգրկելու նաև հայ գրականությունը: Պարզվում է, որ այդ գրականությունը բուլղարացի ընթերցողի ճաշակին, ինտելեկտին ու հոգեկան աշխարհին հոգեհարազատ է, որի ապացույցն էլ մեծ տպաքանակն է: 45 տարվա



ընթացքում Բուլղարիայում տպագրվել է հայ թարգմանչական գրականության 48 գրքանուն: Գ. Հայրապետյանը տողացի թարգմանում է Գ. Սևունցի, Ն. Զարյանի, Ավ. Իսահակյանի, Գ. Էմինի, Պ. Սևակի և այլոց բնագիր ստեղծագործությունները (պոեզիայի համար), իսկ ստեղծագործական թարգմանություններն արվում են բանաստեղծներ Բլ. Դիմիտրովայի, Դ. Բոլյարովի, Ան. Գերմանովի և այլոց կողմից:

Այս ընթացքում թարգմանվում և Վառնայի «Նառոդնա Կուլտուրա» ու «Գ. Բակալով», իսկ Պլովդիվի «Հր. Գ. Դանով» հրատարակչություններում տպագրվում են հայ գրողներ՝ Վ. Թոթովենցի, Բաֆֆու, Հր. Մաթևոսյանի, Վ. Պետրոսյանի, Ալ. Շիրվանզադեի, Ս. Խանզադյանի և այլոց 25 արձակ գործերը: Այս ստեղծագործություններն ամբողջովին թարգմանել է թարգմանիչ Հակոբ Օրմանջյանը, ով նաև «Գիտություն և արվեստ» հրատարակչատանը համապատասխան գիտական սարքերի միջոցով թարգմանաբար տպագրել է «Հայ ուղեգիրները Բալկանների մասին, XVI-XVII դդ.» գիրքը:

Բուլղարացի ընթերցողը հետաքրքրությամբ էր ընդունում այս թարգմանությունները՝ ծանոթանալով հայ ժողովրդի կյանքին և հոգեբանությանը, ապրելակերպին ու մշակույթին: Հետևաբար, գրքերի տպաքանակը տատանվում էր 10-25 հազարի սահմաններում: Բուլղարական պարբերականներում տպագրվում էին թարգմանիչների և գրքերի բովանդակության վերաբերյալ գովասանական արձագանքներ:

Սակայն գրահրատարակչական գործունեության «պիկն» ավարտվեց 1990 թվականին պետական հրատարակչությունների փակվելուց հետո: Մասնավոր հրատարակչությունները, հետամուտ լինելով իրենց առևտրային և ֆինանսական հետաքրքրությանը, կենտրոնացած էին թեթև ժանրային և բուլվարային թարգմանչական գրականության, քրեական և արգելված գրականության



տպագրությամբ: Ստվերում էր մնում այնպիսի ժողովուրդների գրականությունը, ինչպիսիք էին հայերը, վրացիները, բելոռուսները և այլք: Գնալով ավելի էր դժվարանում հայ գրականության տպագրության գործը, քանի որ յուրաքանչյուր գիրք թարգմանելու համար անհրաժեշտ էր հովանավորներ փնտրել: 20 տարի է, ինչ Բուլղարիայում թարգմանությունների նկատմամբ ազգային հրատարակչական քաղաքականություն չի մշակվում: Առանց որևէ պատճառի մասնավոր հրատարակչությունները մերժում են տպագրման առաջարկված հայերեն ձեռագրերը, պատճառաբանելով, թե այդ գրքերը հազիվ են վաճառվում և շահութաբեր չեն: Դա ճշմարիտ չէ, քանի որ չկան հայերեն չվաճառված գրքեր: Գրքերի տարածումն ու իրացումը գիրքը գնահատելու գործից անտեղյակ, երբեմն էլ թերուս մարդկանց ձեռքում է: Գործերն առաջ են գնում կաշառքի, մասնավոր շահերի, ընկերական հարաբերությունների սկզբունքներով և նույնիսկ արտաքին ֆինանսավորման ճանապարհով: Արհամարհվում են թարգմանիչների հեղինակային իրավունքներն ու ստեղծագործական և ֆինանսական շահերը, թարգմանիչներից ոմանք էլ ընդհանրապես դադարել են թարգմանել: Ուսանողները նույնպես չեն ցանկանում զբաղվել թարգմանչական գործունեությամբ, քանի որ հրատարակչություններ խաբում են ու չեն վճարում:

Եվ չնայած այս բոլոր տհաճ իրողությունների պատճառով դադարել էր հայերենից թարգմանված գրականության տպագրությունը, առանձին դեպքերում, մասնավոր որոշ հրատարակչություններ, հիմնադրամներ և կազմակերպություններ, ինչպես նաև անհատներ ֆինանսապես աջակցում են թարգմանիչներ Հակոբ Օրմանջյանին և Հակոբ Մելքոնյանին, ովքեր էլ 1991-2011 թթ. ընթացքում մեծ ջանքերով, սակայն հաջողությամբ թարգմանում և տպագրում են հայ գեղարվեստական, գիտահանրամատչելի, գիտական, պատմական գրականության նմուշները՝ 500-2000 տպաքանակով: Հիմնական ֆինանսական խթանը եղել և մնում են Պլովդիվի և, մասամբ, Սոֆիայի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության (ՀԲԸՄ «Բարեգործական») մասնաճյուղը և մասնավոր ներդրողները: Հիմնականում



հրատարակվել են Ագաթանգեղոսի, Նահապետ Քուչակի, Նար-Ռոսի, Խ. Դաշտենցի, Հովհաննես Շիրազի, Հր. Մաթևոսյանի արձակ և չափածո ստեղծագործությունները: «Միելա» հրատարակչությունը բուլղարերենով լույս է ընծայել Երևանի պետական համալսարանի հրատարակած «Հայ ժողովրդի պատմությունը հնադարից մինչև 1920 թ.» ակադեմիական աշխատությունը, ինչպես նաև Բաֆֆու «Մամվելը»: Ար. Բասմաջյանը ռուսերենից թարգմանել է նաև Գևորգ Էմինի «Յոթ երգ Հայաստանի մասին» և այլ բանաստեղծություններ: Մատենագիտական ցանկում թվարկված գրքերի տպաքանակները սպառվել են և մեծ հետաքրքրությամբ են ընդունվել հայ և բուլղարացի ընթերցասեր հասարակության կողմից: Հայ և բուլղարացի հայտնի մտավորականները յուրաքանչյուր գիրք ներկայացրել են մեծ լսարանին, Բուլղարիայի հայ մամուլում քննարկել և մեկնաբանել են նշված գրքերը, ներկայացրել են թարգմանիչներին:

Չնայած դժվարությամբ ձեռք բերված հաջողություններին, Բուլղարիայում դեռ ծանր է թարգմանիչների վիճակը: Նրանք աշխատում են միայնակ, անապահով, դրամական սուղ միջոցներով: Սկզբունքորեն, Բուլղարիայում չի գործում այն օրենքը, որը պետք է որ պաշտպաներ նաև թարգմանիչների հեղինակային իրավունքները՝ նպաստելով նրանց սոցիալական վիճակի բարելավմանը: Թարգմանիչները հաճախ անվճար են աշխատում (այս օրինակը վերաբերում է նաև հայերեն հրատարակություններին) կամ, եթե պայմանագիր են կնքում հրատարակչությունների հետ՝ վարձատրվում են մեկ տարի անց, իսկ նրանք ֆինանսական անբարենպաստ վիճակում են գտնվում:

Չնայած ֆինանսական բարդ պայմաններին, մեկ կամ երկու հայ թարգմանիչ դեռ շարունակում են աշխատել Պլովդիվի «Բարեգործական» ՀԲԸՄ-ի աջակցության շնորհիվ, և հաջորդ երեք տարիներին գիտության, գրականության և պատմության ասպարեզում կտպագրվեն մի քանի նոր գրքեր:

This text is licensed under Creative Commons

